Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թ.
մարտի 13-ի նիստի N 10
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ

I.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների (այսուհետ՝ կենդանիներ) համարակալման, հաշվառման և գրանցման նպատակն է Հայաստանի Հանրապետությունում առկա գլխաքանակի, դրանց սեռի, ցեղի և գտնվելու վայրի, տեղաշարժի մասին հավաստի տեղեկությունների ստացումն ու անասնաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսումը, վաճառվող մսի և մսամթերքի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, պետական պատվերի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների լիարժեք իրականացումը և հիվանդությունների կանխարգելմանը և անասնաբուժական վերահսկմանը նպաստելը, անասնաբուծական մթերքի որակի փորձաքննությունը և երկրի ներսում կենդանիների տեղաշարժի վերահսկումը, ինչպես նաև միջազգային ստանդարտներով սահմանված պահանջների ապահովմամբ՝ միջազգային շուկա մուտք գործելը:

2. Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման վերաբերյալ դրույթները, այդ թվում նաև դրանց իրականացման ընթացակարգը, սահմանված են «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 18-րդ հոդվածով և Հայաստանի Հանարպետության կառավարության 2004 թվականի հունվարի 29-ի N 59-Ն որոշմամբ:

II. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

3. Մինչ այժմ Հայաստանի Հանարպետությունում կենդանիների համատարած համարակալում, հաշվառում և գրանցում չի իրականացվել:

4. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում 2012 թվականին խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, գրանցման և անձնագրավորման փորձարկման ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 895-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից 2012 թվականի հոկտեմբերից մեկնարկ է տրվել խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման փորձարարական ծրագրին, որն ավարտվել է 2012 թվականի դեկտեմբերին:

5.Ծրագրի շրջանակներում մշակվել է «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգը, որը հնարավորություն է տալիս մուտքագրել և վերլուծել կենդանու և դրա առողջության վերաբերյալ տեղեկությունները և պահպանել դրանք: Մշակվել է «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգից օգտվելու համար ուղեցույց և կազմակերպվել համապատասխան դասընթացներ Ծառայության աշխատակիցների համար:

6. Մշակվել են՝

1) կենդանիների հաշվառման և անասնաբուժական միջոցառումների գրանցման մատյաններ.

2) կենդանիների համարակալման, գրանցման և անձնագրավորման միասնական ձեռնարկ՝ համայնքը սպասարկող անասնաբույժների համար:

7. ՀՀ Վայոց ձորի մարզում հաշվառվել, համարակալվել և «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգ է մուտքագրվել կենդանիների ամբողջ գլխաքանակը, ընդամենը՝ 23.098 գլուխ, այդ թվում. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում՝ 14.333 գլուխ, իսկ Վայքի տարածաշրջանում՝ 8.765 գլուխ:

III. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. Հայաստանի Հանրապետությունում կենդանիների համատարած համարակալման, հաշվառման և գրանցման համար անհրաժեշտ քայլերն են.

1) կենդանու ականջապիտակի, դակող գործիքի, անձնագրի, գրանցամատյանի, անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանի ձեռքբերումը.

2) տվյալների պահման սերվերի ձեռքբերումը.

3) համայնքը սպասարկող անասնաբույժի նշանակումը.

4) տվյալների մուտքագրման համար համակարգչային օպերատորների և գրանցամատյաններ լրացնողների հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը.

5) օրենսդրական փոփոխությունների իրականացումը:

9.Ծառայության կողմից Վայոց ձորի մարզում կատարված կենդանիների փաստացի գլխաքանակի հաշվառմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության մարզերում 2014 թվականի՝ կենդանիների համարակալման համար պահանջվող ականջապիտակների քանկը ներկայացվում է N 1 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության մարզերում 2014 թվականի՝ կենդանիների համարակալման համար պահանջվող ականջապիտակների քանակը

Աղյուսակ 1

N	Սերիա	Տարածաշրջան	Կենդանիների գլխաքանակ /խեկ/	Ընդա-մենը /խեկ/	Թաքնված գլխաքանակ /15%/	Ընդամենը պահանջվող ականջապիտակների քանակ
1	02*1	Թալին	32517		4878	37395
2	02*2	Աշտարակ	29440		4416	33856
3	02*3	Ապարան	20823		3123	23946
4	02*4	Արագած	23227	106007	3484	26711
5	03*1	Արարատ	24725		3709	28434
6	03*2	Արտաշատ	18509		2776	21285
7	03*3	Մասիս	12754	55988	1913	14667
8	04*1	Արմավիր	34806		5221	40027
9	04*2	Էջմիածին	19108		2866	21974
10	04*3	Բաղրամյան	17503	71417	2625	20128

11	05*1	Վարդենիս	36692		5504	42196
12	05*2	Ճամբարակ	16898		2535	19433
13	05*3	Մարտունի	45819		6873	52692
14	05*4	Սևան	22827		3424	26251
15	05*5	Գավառ	27217	149453	4083	31300
16	06*1	Սպիտակ	17031		2555	19586
17	06*2	Թումանյան	24800		3720	28520
18	06*3	Գուգարք	20396		3059	23455
19	06*4	Տաշիր	24436		3665	28101
20	06*5	Ստեփանավան	22896	109559	3434	26330
21	07*1	Կոտայք	31178		4677	35855
22	07*2	Նաիրի	24969		3745	28714
23	07*3	Հրազդան	15964	72111	2395	18359
24	08*1	Ախուրյան	36693		5504	42197
25	08*2	Անի	21390		3209	24599
26	08*3	Աշոցք	28771		4316	33087
27	08*4	Ամասիա	20953		3143	24096
28	08*5	Արթիկ	31245	141844	4687	35932

29	08*6	Գյումրի	2792		419	3211
30	09*1	Գորիս	33371		5006	38377
31	09*2	Կապան	13090		1964	15054
32	09*3	Մեղրի	1750		263	2013
33	09*4	Սիսիան	24224	72435	3634	27858
34	10*1	Եղեգնաձոր	17788		2668	20456
35	10*2	Վայք	10257	28045	1539	11796
36	11*1	Նոյեմբերյան	14632		2195	16827
37	11*2	Իջևան	15953		2393	18346
38	11*3	Տավուշ	10043		1506	11549
39	11*4	Դիլիջան	7695	48323	1154	8849
40	01*1	Երևան	3606	3606	541	4147
Ընդամենը				**858788**	**128818**	**987606**

10. Ծառայությունում առկա է 700 հազար հատ կենդանու անձնագիր: Կենդանիների համատարած հաշվառման և գրանցման համար անհրաժեշտ է ևս 300 հազար հատ կենդանու անձնագիր:

11.Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումով և 2014 թվականին կանխատեսվող կենդանիների գլխաքանակով պայմանավորված՝ անհրաժեշտ է 2500-ական հատ կենդանու և անասնաբուժական միջոցառումների գրանցամատյաններ (յուրաքանչյուր գրանցամատյանում մուտքագրվում է մինչև 500 գլուխ կենդանու տվյալներ):

12. «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգ մուտքագրելու միջոցով ձևավորվող տվյալների բազայի պահման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է տվյալների պահման սերվեր:

13. Համայնքը սպասարկող անասնաբույժների նշանակումը կատարվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից:

14.Համայնքի ղեկավարը անասնաբուժության բնագավառում համայնքը սպասարկող անասնաբույժի միջոցով իրականացնելու է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) գյուղատնտեսական կենդանիների համարակալում, հաշվառում և գրանցում, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ կենդանիների անձնագրերի, կենդանիների հաշվառման և անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների վարում.

2) անասնահակամաճարակային պետական միջոցառումներում ընդգրկված կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ պատվաստումների, ախտորոշման նպատակով արյունառում և անհրաժեշտ ներարկումների իրականացում:

15. Համայնքը սպասարկող անասնաբույժն իր կողմից սպասարկվող համայնքի տարածքում իրականացնելու է.

1) անասնահակահամաճարակային պետական միջոցառումներում ընդգրկված կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կանխարգելիչ պատվաստումներ, ախտորոշման նպատակով արյունառում և անհրաժեշտ ներարկումներ.

2) անասնահակահամաճարակային պետական միջոցառումներում չընդգրկված և լիազոր մարմնի կողմից սահմանված կենդանիների հիվանդությունների կանխարգելման, բուժման և վերացման միջոցառումներ.

3) գյուղատնտեսական կենդանիների համարակալում, հաշվառում և գրանցում, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ կենդանիների անձնագրերի, կենդանիների հաշվառման և անասնաբուժական միջոցառումների գրանցամատյանների վարում.

4) գյուղատնտեսական կենդանիների նախասպանդային և հետսպանդային զննում.

5) կատարված անասնահակահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության և հաշվետվության տրամադրում լիազոր մարմնին.

6) Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրվող անասնաբուժական պետական հսկման ենթակա ապրանքների համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի տրամադրում:

16. Համայնքը սպասարկող անասնաբույժների հաստիքները բաշխվելու են հետևյալ սկզբունքներով.

1) մինչև 200 գլուխ կենդանի ունեցող համայնքում հաստիք չի նախատեսվելու, և գործառույթները վերապահվելու են հարևան համայնքի հաստիքային համայնքային անասնաբույժին.

2) մեկ համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից սպասարկվող համայնքների թիվը չի կարող գերազանցել 4 համայնքը.

3) մեկ համայնքում 200-ից միչև 1000 խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի դեպքում նախատեսվելու է մեկ, 1001-ից 2000-ը՝ երկու, 2001-ից 3000-ը՝ երեք հաստիք և այլն:

4) Համայնքային անասնաբույժների բաշխվածությունը ներկայացվում է ըստ մարզերի՝ համաձայն N 2 աղյուսակի:

Համայնքային անասնաբույժների բաշխվածությունն՝ ըստ մարզերի

Աղյուսակ 2

Մարզ	Համայքային անասնաբույժների հաստիքների թիվ
ԱՐԱԳԱԾՈՏՆ	125
ԱՐԱՐԱՏ	85
ԱՐՄԱՎԻՐ	92
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	142
ԼՈՌԻ	125
ԿՈՏԱՅՔ	83
ՇԻՐԱԿ	153
ՍՅՈՒՆԻՔ	87
ՎԱՅՈՑ ՁՈՐ	38
ՏԱՎՈՒՇ	65
ԵՐԵՎԱՆ	4
ԸՆԴԱՄԵՆԸ	999

17.Յուրաքանչյուր մարզում կենդանիների համարակալումը և անձնագրի լրացումն իրականացվելու է համայնքն սպասարկող անասնաբույժի միջոցով, իսկ տվյալների մուտքագրումը «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգ, և գրանցամատյանների նախնական լրացումն իրականացվելու է պայմանագրային հիմունքներով ընդունված աշխատակիցների կողմից՝ ծառայության պատվերով, մարզի տարածքում ձևավորված ժամանակավոր ցանցի միջոցով:

IV. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

18. Համայնքը սպասարկող անասնաբույժի պաշտոնային դրույքաչափը ընդգրկում է սահմանված նվազագույն աշխատավարձը, առանձնապես վնասակար աշխատանքների համար սահմանված հավելավճարը (աշխատավարձի նկատմամբ 30 տոկոսի չափով) համաձայն N 3 աղյուսակի:

Աղյուսակ 3

Բազային աշխատավարձ	Վնասակար և առանձնապես վնասակար աշխատանքի դիմաց տրվող վարձատրություն (30 %)	Աշխատավարձ
66140	19850	85990

19. Հայաստանի Հանրապետության մարզերում 2014 թվականին կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման համար պահանջվող ականջի պիտակների, գրանցամատյանների և անձնագրերի ձեռքբերման, ինչպես նաև մուտքագրման աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկները՝ համաձայն N 4 աղյուսակի:

Կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման համար պահանջվող ականջի պիտակների, դակող գործիքների, գրանցամատյանների և անձնագրերի ձեռքբերման, ինչպես նաև մուտքագրման աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկները

Աղյուսակ 4

Անհրաժեշտ ապրանքները և գործողությունները	Քանակ	Միավորի գինը	Ընդամենը
*2014 համարակալվող գլխաքանակի անհրաժեշտ ականջի պիտակներ	646 400	125 X 2**	161 600 000
Ականջապիտակի դակող գործիք	1 000	10 000	10 000 000
«ԱՆԻ ՊԱԱՍ» («ANI PAS») համակարգի սերվեր	1	10 527 000	10 527 000
Գրանցամատյանների տպագրություն	5000	1200	6 000 000
Գրանցամատյանների լրացում և տվյալների մուտքագրում	988 000	100	98 800 000
Անձնագրի տպագրություն	300000	30	9000000

ԸՆԴԱՄԵՆԸ			295 927 000

*Ներկայացվում է պահանջվող ականջապիտակների արժեքի հաշվարկը ըստ փաստացի գլխաքանակի՝ (առանց Ծառայությունում առկա ականջապիտակների քանակի) 988 000 X 125 X 2 = 247 000 000 ՀՀ դրամ, որի արդյունքում Կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման համար պահանջվող ականջի պիտակների, դակող գործիքների, գրանցամատյանների և անձնագրերի ձեռքբերման, ինչպես նաև մուտքագրման աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկների (Աղյուսակ 4) ընդհանուր գումարը կկազմի 381 327 000 ՀՀ դրամ:

**Նախատեսվում է նոր ականջապիտակները պատվիրել Եվրոպական չափորոշիչներին համապատասխան և յուրաքանչյուր կենդանուն ամրացնել 2-ական ականջապիտակ:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թ.
մարտի 13-ի նիստի N 10
արձանագրային որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ	Միջոցառում	Ակնկալվող արդյունքները	Վերջնաժամկետը	Պատասխանատու կառույց	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1	Համայնքը սպասարկող անասնաբույժների ուսուցում կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման վերաբերյալ թեմաներով	Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային հմտությունների բարելավում և մակարդակի բարձրացում	Համայնքը սպասարկող անասնաբույժների համալրման առկայության դեպքում երկու ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

2	Նախնական գրանցում կատարող և մատյանները լրացնող աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերի կնքում և ուսուցում	Նախնական գրանցման և մատյանների լրացման համար անհրաժեշտ թվով ուսուցված աշխատակիցների առկայություն	Ֆինանսավորումից երկու ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Պետ. Բյուջե Բյուջետային հատկացումներին համապատասխան
3	Սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքում ականջապիտակների և դակող գործիքների ձեռքբերում	Համարակալման համար անհրաժեշտ թվով ականջապիտակների և դակող գործիքների առկայություն	Ֆինանսավորումից չորս ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Պետ. Բյուջե Բյուջետային հատկացումներին համապատասխան
4	Գրանցամատյանների և անձնագրերի տպագրություն և ձեռքբերում	Կենդանիների հաշվառման համար գրանցամատյանների ձեռքբերում	Ֆինանսավորումից երկու ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Պետ. Բյուջե Բյուջետային հատկացումներին համապատասխան
5	Սերվերի ձեռքբերում, տեղադրում և փորձարկում	Փորձարկված սերվերի առկայություն	Ֆինանսավորումից երկու ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Պետ. Բյուջե Բյուջետային հատկացումներին համապատասխան

6	Ականջապիտակների և դակող գործիքների բաշխում	Հաշվառման և համարակալման իրականացման նպատակով անհրաժեշտ ականջապիտակների և դակող գործիքների ապահովում	Ձեռքբերումից հետո մեկ ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն և ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ֆինանսավորում չի պահանջվում
7	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի անասնաբուժության տեսչության և մարզային կենտրոնների տեսուչների ուսուցում	Հաշվառման և համարակալման իրականացման նպատակով անհրաժեշտ մասնագետներով ապահովում	2015թ. մարտի երրորդ տասնօրյակ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
8	Խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում (մեկնարկ)	Համարակալված և հաշվառված կենդանիների առկայություն	Բաշխումից հետո 15 օրվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Ֆինանսավորում չի պահանջվում

9	Անձնագրերի լրացում	Հաշվառման և համարակալման արդյունքներով լրացված գրանցամատյանների առկայություն	Համարակալման հետ զուգահեռ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն և ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ֆինանսավորում չի պահանջվում
10	Տվյալների մուտքագրում «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգ	Անհրաժեշտ տվյալներով «ԱՆԻ ՊԱՍ» («ANI PAS») համակարգի առկայություն	Համարակալումը սկսելուց երկու ամիս հետո տաս ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Ֆինանսավորում չի պահանջվում
11	Գրանցամատյանների լրացում	Հաշվառման և համարակալման արդյունքներով լրացված գրանցամատյանների առկայություն	Համարակալումը սկսելուց տասներկու ամսվա ընթացքում	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Ֆինանսավորում չի պահանջվում
12	Արդյունքների ամփոփում	Համարակալման և հաշվառման արդյունքների ամփոփ տվյալների առկայություն	Համարակալման ավարտից չորս ամիս հետո	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	Ֆինանսավորում չի պահանջվում